ՍԵՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Նա շատ էր ոգևորված 75-ամյակը նշելու մոտիկ հեռանկարով և նույնիսկ իր պատրաստությունների մասին պատմում էր մտերիմներին, հատկապես շեշտում էր, որ այն նշվելու է ծննդավայրում, ու զգացվում էր, որ մանկության գույները, բույրերը, համերը պատվում էին նրա շուրջը, և նրա դեմքը լուսավորվում էր, աչքերը պայծառանում էին: Բայց, ավաղ, այդ հոբելյանը գրական աշխարհը կնշի առանց նրա, կնշի նրա հարուստ գրականագիտական ժառանգության իրողության հետ միասին, նրա մտորումների, խոր դիտելիքների, գիտական եզրահանգումների, գրականագիտական բացահայտումների, մեծաքանակ գրքերի, գրաքննադատական հոդվածների առկայությունը որպես հավերժ կենդանություն ապրողների կողքին ունենալով:

Սևակ Արզումանյանը ծնվել է 75 տարի առաջ, Լեռնային Ղարաբաղի Սեյդիշեն գյուղում: Միջնակարգ դպրոցը տեղում ավարտելուց հետո գնացել է ոչ թե Բաքու, ինչպես այն ժամանակ անում էին շատերը, այլ Երևան: Ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ուսանողական տարիներին աչքի է ընկել դեպի գրականությունն ու գրականագիտական միտքն ունեցած ներքին մղումով և անանց սիրով: Նա խորին հարգանքի է արժանի հենց այն պատճառով, որ մեն-մենակ, սեփական ուժերով բացել է գրականագիտության մեջ իր սեփական ճանապարհը: Գիտնականի այս տեսակը հետազոտող է լինում ողջ կյանքում, մինչև վերջին շունչը: Նա վիթխարի աշխատասիրության մարմնավորումն էր և իր եռանդը դրսևորում էր թե՛ հասարակական գործունեության, գրականագիտության և գրական կյանքի մեջ և թե՛ մանկավարժադասախոսական բնագավառում: Շատ շուտ դարձել էր բանասիրական գիտությունների թեկնածու և նույնքան վաղ՝ բանասիրական գիտությունների դոկտոր: Նրա ատենախոսությունների թեմաներն էին «Հայ դրականությունը ռուսական առաջին հեղափոխության էտապում» (1954 թ.), «Սովետահայ վեպը» (1967 թ.): Նա երկարամյա դասախոսական աշխատանք է կատարել սկզբում Երևանի պետական համալսարանում, այնուհետև Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, ուր մի շարք տարիներ եղել է հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական ֆա-

կուլտետի դեկան: 1978-ից մինչև իր կյանքի վերջը աշխատում էր Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ գրականության և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: 1962–1968 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: Արդի գրականության խնդիրներում իր ցուցաբերած ներգործուն ազդեցության արդյունքն էր 1958 թ. Հայաստանի գրողների միության անդամ դառնալը:

Սևակ Արզումանյանը Հայաստանի գրողների միության այն դեմքերից էր, որ մինչև կյանքի վերջը եռանդուն ձևով գործեց ի նպաստ այդ Միության առաջընթացի: Նա առաջնակարգ գրաքննադատ էր, ուներ սուր գրիչ, շատ-շատերը գիտեին նրա գրչի այդ առանձնահատկության մասին: Նա իր գիտական հետաքրքրությունների համար ընտրել էր հայ գրականության նոր վերելքի երկու գարերը՝ XIX-ը և XX-ը՝ արևմտյան և արևելյան հատվածների գրական դրսևորումներով: Հետաքրքրվում էր նաև սփյուռքահայ գրականությամբ և դրա արձագանքներից մեկը «Վահրամ Հաճյան» մենագրությունն էր:

Սևակ Արզումանյանը գրում էր այնպես, ասես մեկը վերևից շարժում էր նրա ձեռքը: Նա կարող էր ժամերով չհեռանալ գրասեղանից, բայց միաժամանակ նույն օրը այցելել թատրոն կամ համերգային դահլիճ: Սևակ Արզումանյանը երաղող էր ու լավատես: Այն մութ, չարագուշակ տարիներին երբեք չէր բողոքում, թեպետ բոլորի նման ինքն էլ կրում էր նույն դժվարությունները՝ կենցաղային, տնտեսական: Նա շարունակում էր ստեղծագործել, գրել գրքեր ու հոդվածներ: Բոլորովին վերջերս ավարտեց իր ստեղծագործության մատենագիտությունը: Ասում էր, որ չի ուզում գա թողնել ուրիշին անելու, առավել ևս չի կամենում 75-ամյակը նշել առանց սեփական մատենագիտության: Իսկ նրա մատենագիտությունը հարուստ է ակնառու նվաճումներով: Նա բազմաթիվ մեծարժեք գրքերի հեղինակ է: Դրանք են՝ «Վահան Թոթովենց», «Զապել Եսայան», «Բանաստեղծության ազգային հողը», «Երգիծանքի ասպետը» և այլն:

Կոթողայինը Սևակ Արզումանյանի գրականագիտական ժառանգության մեջ նրա «Խորհրդահայ վեպը» ծավալուն մենագրությունն է, որ բաղկացած է հինգ ստվար հատորներից: Առաջինը լույս է տեսել 1967-ին, չորրորդը՝ 1990-ին, իսկ հինգերորդ հատորը պատրաստ է տպագրության: Այս հետազոտությունը վաստորեն մի ամբողջ գարաշրջանի գրական տարեգրություն է, որն ապագայի գրականության պատմաբանի համար լինելու է կարևոր գիտական սկզբնաղբյուր: Հեղինակը վիթխարածավալ գրական նյութ է կարդացել, հետևել գրական մամուլում տարբեր վեպերին և արձակ գործերին տրված գնահատականներին: Նա գիտական վերլուծման է ենթարկել խորհրդահայ գրականության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են՝ Ե. Չարենցի «Երկիր Նաիրին», Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանը», Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», Ստ. Զորյանի պատմավեպերը, Ս. Խանզադյանի վեպերը: Նրա հատորների մեջ բազմաթիվ են վերոհիշյալ և ուրիշ հեղինակների արձակը ճիշտ գնահատելու եկակետային դրույթները: Այս բազմահատոր մենագրության հեղինակը լուսավոր հայացքով է քննում խորհրդահայ վեպը: Նա տեղին է մեջբերում Գուրգեն

Մահարու հուշագրություններից հետևյալ դրվագը. «Բակունցը մի անգամ ասել է Չարենցին.

– Ատրյադը թույլ է: Հները հին են, նորերը նոր են ոտքի կանգնում: Չարենցը անհանգստացած պատասխանել է.

– Կկանգնեն, կգան, կհասնեն, ի՞նչ է, սպառվե՞ց հայ ժողովրդի հանճարը (հ. 4, էջ 3): Ս. Արզումանյանը առանձին հեղինակների ստեղծագործությունը գնահատում է նրանց էության բացահայտման այնպիսի վարպետությամբ, որ նրա ելակետային դիտարկումները կարող են դառնալ առանձին հետազոտությունների նյութ: Այսպես, օրինակ, Հրանտ Մաթևոսյանի արձակի մասին գրում է. «Պատմվածքներում ու վիպակներում Հր. Մաթևոսյանը ստեղծում է «հայ ազգային կերպարը»: Իր հիմքով արմատներով ու սաղարթներով, ներկայով ու գալիքով, ուրախանալու և տխրելու, հիանալու և հիասթափվելու, ոգորումների ու տագնապների ամբողջական բեռով: Իսկ գրականության ազգային նկարագրի հարցը գրողի գեղագիտության մեջ առաջնային է, ողնաշարային (հ. 4, էջ 254–255):

Սևակ Արզումանյանն ուներ նաև գեղարվեստական գործեր: «Ցամաքող աղբյուրներ» ինքնակենսագրական վիպակը լույս տեսավ 1997 թ., թեպետ ստեղծվել էր 1956–1958 թթ.: Այն «հեղինակի անանց կարոտն է, մեծ ցավն ու հպարտությունը հայրենի գյուղի և ամբողջ Արցախի հանդեպ»: Վիպակի ընարանը հեղինակն ընտրել է Համո Սահյանի քնարերգությունից, նա իրեն հոգեհարազատ է զգացել մի բանաստեղծի, որն իր նախնիների հետ ունեցած կապերը հնչեցրեց համամարդկային ընկալմամբ.

Երազներիս ճամփան հեռու-հեռուներից
Ծանոթ եզերքներով ձգվել անվերջ,
Ոլորվելով եկել, մոլորվել է նորից
Մանկությանս կապույտ հեքիաթի մեջ...

Վիպակի էջերում վերակենդանանում են հեղինակի մանկության ու պատանեկության տարիները, որոնց սլացքում մարդկային ճակատագրերի բախման, իրական դեպքերի գեղարվեստական վերակերպավորման մեջ տեղ-տեղ երևում են ընության արտակարգ զգացողությունը, պաշտամունքի հասնող իրական կյանքի քաղցրությունը: «Մթնշաղի ցրվելով լուսնի դեղինը հետզհետե դորշանում է արշալույսի հետ, ապա աննկատ անցնում սարերի ետևը: Ցող ու շաղով լվացվել է անտառների ու դաշտերի երեսը: Ուր որ է արեգակը հազար փայլով կճառագի ու կշողշողա ցող ու շաղի մեջ, իր արևի սրբիչով կմաքրի դաշտ ու անտառի շաղոտ երեսը» (էջ 85):

Սևակ Արզումանյանն ամեն մի գործ ձեռնարկում էր ոգևորությամբ: Նրա ղեկավարությամբ շուրջ 25 հետազոտողներ դարձան գիտության թեկնածուներ: Ժամանակակից շատ գրողների ստեղծագործություններ դարձրեց հատուկ հետազոտության նյութ և հանձնարարեց իր ասպիրանտներին «Աբիգ Ավդյան», «Վարդան Գրիգորյան», «Մարո Մարգարյան» և այլն: Իրավացիորեն հիացած էր Վարդան Գրիգորյանի պատմագեղարվեստական արձակով և այդ հիացումը վոխանցում էր իր շրջա-

պատին: Մի առանձին թեմա էին դարձրել Սոլժենիցինի «Արշիպելագ Գուլագի» և Գուրգեն Մահարու «Մաղկած փշալարերի» գրական առնչությունները, որոնց միջոցով բացահայտում էր ստալինյան ճամբարների դժոխային կյանքի գեղարվեստական վերարտադրման պատմական կարևորությունը: Սևակ Արզումանյանը անմիջական առնչություն էր ունեցել գրական մեծերի հետ՝ Ավ. Իսահակյան, Գ. Մահարի, Ն. Զարյան, Հր. Քոչար, Հ. Շիրազ, Ս. Կապուտիկյան, Պ. Սևակ, Գևորգ Էմին, Համո Սահյան, Վահագն Դավթյան և ուրիշներ. այս փոխշփումները խիստ շահեկան էին նրա դասախոսական աշխատանքում, որովհետև նա հենց այդ երևելիների երկերն էր դասավանդում, գրողների, որոնց հետ ոչ միայն շփվել էր, այլև շատ հաճախ եղել էր մտերիմ:

Նա շատ զգացմունքային էր, հուզվում և արտասվում էր սրտառուչ դեպքերից, առավել ևս գեղեցիկ ու անձնազոհ արարքներից: Լավատես էր Հայաստանի ապագայի հանդեպ: Իրեն միշտ կապված էր զգում Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ, երկար տարիներ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդի անդամ էր, հիմնադրել է «Վիլյամ Սարոյան» համալսարանը և նրա հետ կապում էր մեծ հույսեր: Ընդհանրապես ուսանողներին գնահատելիս չափանիշ էր ընդունում իր սերնդի ուսումնատենչությունը և շատ հաճախ հիասթափվում էր՝ այն չգտնելով:

Վերջին տարիներին նա արժանիորեն գնահատվել է: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Այս նոր կոչումը նրան շատ էր ոգևորում, նա ամենուր ասում էր, թե արգարությունը հաղթանակել է: 2003 թ. Սևակ Արզումանյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացու» անվան մեդալով:

Նա իր շրջապատում՝ հատկապես կանանց մոտ, երբեք չէր ցուցադրում իր առողջական խնդիրները, իրեն պահում էր առույգ և ոգևորված, ապագայի ստեղծագործական անելիքներով մտահոգ: Այդպես էլ նա կմնա ճանաչողների հուշերում՝ որպես հայրենիքի ու գրականության նվիրյալ ու պաշտպան:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ